ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ՍՏ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ.

(Գրուած Վ.–Ագուլեցի Մելքոն Փանեանցին).

28.

Թիֆլիս, 12 օգոստոսի 1870.

Պատուական եղբայր,

Ձկամիմ Ձեզ երկար սպասել տալ իմ պատասխանիս Ձեր սիրելի նամակին անցեալ ամսու 27-ից. մանաւանդ որ այժմ, ամառնային մեռուցիչ ջերմութիւնը որպէս թէ փոքր ինչ մեղմացած, կարելի էր չունչ առնուլ, մտածել և գրել քանի մի շարք բան։

Ուրախ եմ լսելով Ձեր նամակից, որ ստացած էք արդէն իմ ծրարը «Ճարութիւն և Մանուէլ». Ատուած տայ, որ հաւանիք դմա. ես ընթերցած չեմ այդ, վասն որոյ չունիմ ոչինչ դատողութիւն դորա մասին։

Ես բոլորովին ձայնակից եմ Ձեզ, որ իմ դրութիւնը (կացութիւնը) ապահովելու, այլ և իմ ծերութեանս խաղաղ օրեր պատրաստելու համար, ոչ թէ միայն բաւական էր, այլ և նախապատիւ միանգամայն տեղափոխուել դէպ ի Ձեզ Մոսկուա, ծառայել այդ տեղ, լինել Ձեր մօտակայքում որ փոքրիկ բաղդաւորութիւն լինելու չէր ինձ, ըստ որում մօտից ուրախակից և ցաւակից լինել իւր բարեկամին և ուրախակցութիւն ու ցաւակցութիւն գտանել նորա կողմից — այդ մի առանձին երանութիւն է ինձ, մի երանութիւն, որից առաւել մեծ և հոյակապ բան ոչինչ Ատուած կարող չէր մեզ պարգևել. և մեր բարեկամութիւնը . . . այլ ինչ հարկաւոր էր խօսքը, երբ որ Ձեր սիրտը կարող էր Ձեզ այդ բանը աւելի ճարտարախօս լեզուով բացատրել Ձեզ։

Իմ առաջարկած պայմանքը դժուար լցուցանելիք են. ես կարծում եմ, ոչ. ես կամէի ունենալ այն չահաւէտութիւնքը, որ ունեցած եմ, այսինքն երկու պրոֆեսսորական պաշտօնքը 2000 մանէթի չահաւէտութեամբ. ուրեմն ինստիտուտը այդ տեղ ունի 400 մանէթի տարեկան օգուտ, որովհետև եթէ այդ պաշտօնքը առանձին առանձին թոչակաւորէր, այնուհետև պիտի նա ծախսէր 2400 ման. Եւ արդարև առանց ճանապարհի ծախքի և փոքր ինձ վեհանձնաբար օգնութեան Լազարեանց կողմից, որում ես անարժան չէի, կարծեմ, ինչպէս կարելի էր ինձ մտածել տեղափոխութեան վերայ, որ և այդպէս պատրաստելու էր ինձ մեծամեծ ծախք։ Այս նամակիս հետ

միասին Դուք ստանում էք իմ մի նամակ առ Խրիստոֆոր Եակիմովիչը[1], որ խնդրում եմ հասուցանել նմա, բարեկամական հոգաբարձութեամբ։

Թիֆլիզի կեանքը թէ նիւթապէս, թէ մտաւորապէս և թէ բարոյապէս անհաւանելի է ինձ. նիւթապէս, որովհետև ամենայն էական կարիք երկպատիկ և երեքպատիկ աւելի թանգ են. բնակութիւն, ծառայք, փայտ և ջուր, հանդերձեղէնք, դերձակք, որ շատ վատ կարում են։ Կը հաւատաս, որ ես ասեմ քեզ, օրը 10 ռուբլին բաւականանում չէ, և այդպէս միշտ նեղութեան և տառապանքի մէջ եմ, այս տեղ տանուտեարք խղճմտանք չունին, տուն ես վարձում, իսկոյն պիտի տաս կամ բոլոր տարու կամ թէ կէս տարու համար գոնեայ տան վարձը յառաջուց. ուրեմն ստիպած ես պարտք առնուլ, ուրեմն 100 մանէթ տալիքդ 120 տալ. մտաւորապէս, որովհետև այս տեղ Հայերը շատ օտարացած են հայականութիւնից. փոքր ի շատէ կրթեալ Հայերը խօսում են միայն ռուսերէն, չունին ամենևին ոչինչ հայկական հոգի և ինտերես, ընկած են միայն իւրեանց առօրեայ վայելչութեան, ուտելու խմելու և թղթախաղութեան յետևից. դորա ընդունած են միայն Ռուսաց վատթար, բայց ոչ արժանի նմանութեան յատկութիւնքը. չկամին և Հայք լինել[2]։

Մի այլ կարգ մարդերի կամի լինել հայրենասէր, բայց շըրթամբք միայն և ոչ արդեամբք և գործով, և իւրեանց անգործութեան և անսրտութեան մեղքը ձգում են միայն տէրութեան վերայ— ամենևին անիրաւաբար. որովհետև, իմ կարծիքով պահանջել, որ մեր ռուսական տէրութիւնը հոգատար լինի Հայոց լեզուի և ազգային ուսման պարգաւաճանքին[3], այդ կարելի չէ. Նորա ինտերեսն է, որ Հայք ամենայն մասամբք, լեզուով և գիտութեամբք զուգախառնուին Ռուսաց հետ. բայց եթէ Հայք ինքեանք չկամին պահպանել իւրեանց հայութիւնը ծաղկեցնելով այդ ուսմամբ և գիտութեամբ ազգային հիմքի վերայ, նա ինչ մեղաւոր է։

Մի այլ կարգ ժողովրդի, տգէտ ամբոխը կորած է թշուառութեան անդունդքի մէջ. դորա կեր ու խումը ախտ ու կեղտ և ապականութիւն է. տնական կեցութիւնը նոյնպէս վատթար. Հայոց արուեստաւորքը այնքան յետ են մնացած, որ Ռուսաց սօլդատը հազարապատիկ լաւ աշխատանք, լաւ գործ և աւելի պատուաւոր

1) Խաչատուր Յովակիմեան Լազարեանց. Յ. Տ. Յ.

2) Հապա ինչ պիտի ասէիր, եթէ այժմ աչքդ բանայիր եւ մեր «կրթուածներին» տեսնէիր։ Ուրեմն, մեր ազգային Թեթեւամտութեան այդ ցաւը նոր չէ. Նալբանդեանն էլ կռուել է նրա դէմ. Տ. Յ. Յակ.

5) Պահպանում ենք հեղինակի ուղղագրութիւնը բոլոր նամակներում. Յ. Տ. Յ.

կերպով լցուցանում է, քան թէ մեր անամօթ և խարեբայ տգէտ Հայը. բարոյապէս, որովհետև մի ճնշուած և մեծաւորների ձեռամբ կեղեքուած ժողովուրդ կարող է միայն պահպանել իւր անձը խաբեբայութեան զէնքով. արդարութիւնը ձեռնտու չէ նմա. մեր Հայը Ասիայում քաջ ուսած է կաշառք առնուլ և կաշառք տալ, անիրաւ ճանապարհներով հարստութիւնք ձեռք բերել, որովհետև տեսանում է որ արդարութեամբ ոչինչ կարող չէ վաստակել։ Սէր առ մարդ և առ Աստուած, ընկերասիրութիւն և աստուածասիրութիւն վերացած է այստեղ. աղքատը չափից դուրս անբաղդ, հարուստը չափից դուրս բաղդաւոր։ Ոչինչ բարեգործութեան գաղափար չկայ, որովհետև ոչինչ հասարակաց օգտի գաղափար։

Մեր այժմեան Հոգաբարձուք լաւ մարդիկ են, բայց չգիտեն թէ ինչ կամին, և այսպէս ուսումնարանի վիճակը մնում է մինչև այսօր տարտամ և անորոշ. մի խորհուրդ և նպատակ պիտի ունենայ որ և իցէ մարդկային գործունէութիւն. ապա թէ ոչ զուր և անօգուտ աշխատաւորների ջանքը։ Արդաթ ես չունինք այս բոպէիս գանձարանում, որովհետև ուսումնարանը լոկ բարեգործութեան տուն է։ Մեր ուսումնարանը, ըստ իւր կոչման, պիտի լինի հոգևոր—դա է նորա պահպանութեան խարիսխը. բայց մի լոկ հոգևոր ուսումնարան առանց ընդհանուր աշխարհական կրթութեան, մեր ժամանակներում, ամուլ և ապարդիւն բան է։ Ուրեմն այս տեղ հարկաւոր են գիմնազիոնական կարգեր և երկտեսակ—կլասիկական և ռէալական և այսքան այլազան ուսանելիք ամփոփել մի ուսումնարանի մէջ—այդ բազմանիւթութիւնը (многопредметность) ահա մի ուսումնարանի մէջք կոտրող բանը։ Եւ ինչ առնէ այս տեղ ինսպեկտորը, այս բոլորովին անշէն հայկական անապատի մէջ. այս տեղ 10 տարու միաբան աշխատութիւնը տակաւին մեծ պտղաբերութիւն կարող չէր յառաջացնել. և ուր են դարձեալ աջողակ լեզուագէտ աշխատաւորքը, որ պիտի օր ու գիշեր գրէին և թարգմանէին։ Մեք ունիմք դպրոց, բայց ոչ մի օրինաւոր դպրոցական մատեան, մինչև հայերէն, մի մարդավայելուչ հայերէն ուսուցանելու մեր անլեզու Հայկազեան աշակերտներին, ոչ։

Եւ ամենեին ցաւելին այն է, որ ոչ ոք, ոչ հոգաբարձուներից և ոչ իսկ վարժապետներից չէ հասկանում այս խնդրի մեծութիւնը, կամ, աւելի ուղիղն ասեմ, մտքով ևս նկարագրել կարող չէ այդ խնդիրը. վասն զի, ինչ որ այս տեղ, թէ ուսեալ և թէ անուս, թէ գիտուն և թէ տգէտ հասկանում է բառովս «հայերէն լեզու», ոչ այլ ինչ է, եթէ ոչ տգէտ խառնիճաղանջի բարբառ, որպէս թէ դորանով հնարաւոր էր դպրոցի մէջ գիտութեան աւանդութիւն։ Վայ ինձ. իմ կացութիւնը շատ դժուարին է այս տեղ և դորա պատճառը այն է, որ ես յանձն եմ առած մի մեծ բարոյական գործ, մի

ազգային դպրոցի ազգային հարազատութեամբ ներքին կարգադրութիւնը և իմ գաղափարների համախոհ ու գործակից մարդիկ չունիմ. թաթարախօսութիւնը և ռուսախօսութիւնը այնպէս բռնաբար տիրած է մեր հայկական հոգիներին և սրտերին—դարերը ի զուր եկած և գնացած չեն խղճալի հայերի գլխի վերայով—որ այդ տեղ ոտքից մինչև գլուխ պիտոյ էր ռեֆորմ. բայց սակայն մարդիկ ի բնէ ծոյլ են և աշխատութեան ատելացողք. վատթար սովորութիւնը դարձած է երկրորդ բնութիւն. նորը, աւելի լաւը մեծ պատերազմ ունի ընդդէմ հին ապականութեանը, որ քերելու և սրբելու համար, կարեւոր են ամենեին այլ զօրութիւնք և հնարներ, քան թէ մեր թշուառ Հայկական վիճակի մէջ կարելի էր գտանել։

Այս բոլոր լուսցանելի աշխատութիւնքը չէին ինձ լինելու յուսահատութեան պատճառ. բայց սիրտս ուրախ չէ. դէպ ի որ կողմ դարձուցանում եմ երեսս, գարշելի պատկերներ հանդիպում են ինձ։ Դու գիտես իմ անբաղդութիւնը. ես կամիմ սիրել, բայց եթէ չկարողացայ սիրել, անբաղդ եմ ես. մեռած է հոգիս և սիրտս, եթէ նա չունէր պատճառ բարոյական պատճառ սիրելու, ի հարկէ մարդիկը։ Այս ցաւի մին հին ցաւ է իմ սրտի մէջ. դորա համար չատ անգամ մարդիկ. իմայինք և օտարք խելագար համարեցին, հայհոյեցին, դատնացուցին զիս և թունաւորեցին կեանքս. որովհետև այս աշխարհիս մարդիկ—այդպէս ուսուցանում է փորձը—անարժան էին իմ սիրուս, բայց ի մի հատ մարդուց—մի հատ մարդուց 1)։

Միտ դնելով այս բոլոր իրողութիւններին ի հարկէ չատ ու չատ տենչալի էր ինձ Ձեր մօտաւորութիւնը։ Ինչ որ ինձ հնարաւոր էր, արեցի գրելով առ Խրիստաֆոր Եակիմովիչը. տեսանենք, ինչ կպատասխանէ ինձ։ Ռանանովի առաջարկած պայմանքը բոլորովին անչահաւէտ են ինձ և այն из участія ко мнѣ. прекрасное участіе!! 1200 ման. երևում է Հայոց լեզուի դասատուութիւնը կամին յանձնել պարոն Էմինին։

Ինչ է առնում մեր հասարակաց բարեկամ աւագերէց Տէր Յարութիւնը. Շահազիզը. մեք այս տարի Թիֆլիզեան տօթերի և գերօրինակ ջերմութեան մէջ խաչուեցանք ու հաչուեցանք. Էմանուէլը մինչև այս րոպէս ես առողջ չէ. փորը գնում է ջրի պէս, որովհետև ջերմութիւնից քուն և հանգիստ չունի. այսօր սատիկ անձրև թափուեցաւ չատ խոշոր կարկուտով հանդերձ, որ բաւական զովացուց օդը։ 37 տարի կեցած լինելով հիւսիսային կլիմայում, հեշտ չէ իսկոյն սովորել հարաւային այրիչ ջերմութեանը, որ թէ այսպէս թէ այնպէս առողջաւէտ չէ. որովհետև չորացնում է և ցամաքեցնում է մարդերի կենդանական հիւթը և խոնաւութիւնքը, և այդ պատճառով այս տեղ մարդիկ այրուած ու չատ նուազած են.

1) Մելքոն Փանեանցին է ակնարկում. Ց. Տ. Յակ.

լիք լիք երեսներ չատ սակաւ կան այս տեղ, մինչ մեր Հայերը սովորաբար պարարտանում են Մոսկուայում, ուր մի պակասութիւն կայ, այսինքն ձմեռան չափազանց երկարութիւն. իսկ Թիֆլիզում ամենեին ոչինչ ձմեռը, ուրեմն և ջիլերի կաղդուրումը անհնարին։

Այս ամառս, ինչքան կարելի էր աշխատել գործ դնելով իմ դիմացիոտ կամքի էներգիան (ոյժը և զօրութիւնը), աշխատասիրած եմ մի ռուսական քերականութիւն մակագրութեամբ գործնական առաջնորդ ուսումնասիրելու ռուսական լեզուն (практическое руководство къ изученію русскаго языка), որ կամիմ տպել. բայց թէ ինչպէս կը յաջողի. չգիտեմ։ Այժմ մտածում եմ ռուս բառարանի վերայ, հիմք առնելով ինձ Ռէյֆի բառգիրքը փոքր ինչ ընդարձակ ոճով և կատարելագործութեամբ Դալի բառարանի օգնութեամբ. յետոյ կամէի աշխատասիրել մի ռուս իրիստոմատիա Հայերի համար, բաղադրութեամբը հանդերձ։ Թէ ինչպէս պիտոյ էր մեր Հայերին մի օտար լեզու ուսուցանել, դորա եղանակը ոչ ոք մեր Հայերից չգիտէ. կամ եթէ գիտէին ես ոմանք, ոչ ոք չկամի կամ թէ կարող չէ յանձն առնուլ այդ աշխատութիւնը։

Ազգային ցաւերից դարձուցանելով խօսքս, գալիս եմ դէպ ի ընտանեկան ցաւերը։ Եղբայրս իւր վաճառական գործերի մէջ կարօտ լինելով արծաթի, ուղարկում է Ձեզ մի փոխանակագիր (вексель) 1352 մանէթի չորս ամիս ժամանակով սկսեալ այս օգոստոսի 23-ից, բայց խնդրելով որ տոկոսիքը հաշուին գալոց սեպտեմբերի առաջին թուից մինչև դեկտեմբերի վերջը։ Եմս հարկաւոր է այդ արծաթը Հաշտարխանում մինչև 10 սեպտեմբերի։ Իմ ազնիւ բարեկամ, խնդրում եմ Ձեզանից վերոյիշեալ արծաթը 1300 մանէթ հասուցանել այն տեղ յանուն իմ եղբօր, ինչպէս տեսանում էք հասցէն վերևի մէջ, կամ բարաթ առնելով, կամ թէ յատուկ արծաթով, հաշուելով ճանապարհի ծախքը ստացողի վերայ— այսինքն եթէ չյաջողուեցաւ Ձեզ բարաթ առնել այս կամ այն պատճառով։ Հատուցմանը երաշխաւոր եմ Ձեզ, թէ կապիտալի և թէ տոկոսիքի մասին, այսինքն 1352 մանէթ։

Բարեմաղթելով Ձեզ հոգևոր և մարմնաւոր առողջութիւն, մնամ

Ձեր

զՁեզ անխարդախ սիրով սիրող

Ս. Նազարեանց.

Սրիստոֆոր Եակիմովիչի նամակը յետ մնաց, որովհետև տակաւին տարտամ է հոգիս և սիրտս, արդեօք յուսալի էր դարձեալ տեղափոխուել դէպ ի Թիֆլիս փոքր ի չատէ չահաւէտ պայմաններով, թէ ոչ։

(Շարունակելի)